

ՆՅՈՒԹԵՐ ԶՄՅՈՒՌՆԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Աթենքի «Զմյուռնիացիների միությունը» (Ένωσις Σμαρναίων) հատուկ մատենաշարով լույս է ընծայում առանձին ուսումնասիրություններ՝ նվիրված հնամենի այդ քաղաքի պատմությանը, ազգագրությանը, աշխարհագրությանը և այլ բնագավառների, հասկանալի է, շեշտը դնելով հունական քաղաքի և նրա հույն տարրի վրա։ Բայց քանի որ Զմյուռնիայում գարեբ առաջ հաստատվել էր նաև ստվարաթիվ, քաղաքի տնտեսական ու մշակութային կյանքում զգալի դեր խաղացող հայ բնակչությունն էս, ապա այդ ուսումնասիրություններում որոշ տեղեկություններ կան նաև հայերի մասին։

Վերահիշյալ մատենաշարով մինչև օրս լույս է տեսել 14 մենագրություն։ Այստեղ մենք կանդ կառնենք հետևյալի վրա¹։

Մարկոս Անտոնիոս Կացայիտեսը (1717—1787 թթ.) Կորֆուի գիտուն մարդկանցից էր, մասնագիտությամբ փաստաբան։ Նա XVIII դ. առաջին կեսին երկու անգամ ճանապարհորդել է Հունիական և էգեյական ծովերով և 1740, 1742 թթ. գարնան-ամռան ամիսներին, եղել է Զմյուռնիայում։ Երկրորդ ճանապարհորդության ժամանակ նա եղել է նաև Կոստանդնուպոլսում, Մոդավիայում ու Վալախիայում և 1743 թ. վերադարձել իր հայրենիք՝ Կորֆու։ Յ. Ֆալբոսն ահա հրատարակել է Կացայիտեսի ճանապարհորդական նոթերի հիման վրա XVIII դ. վերջին կամ XIX դ. սկզբում կատարված շարադրանքը՝ Յ. Ֆալբոսը հրատարակել է Զմյուռնիա կատարված երկու ճանապարհորդություններին վերաբերող հատվածները (82 էջ)։

Գիրքը բաղկացած է համառոտ ներածություններից (էջ 13—22), խալիբեն բնագրից (էջ 23—

87) և նոր հունարեն թարգմանությունից (էջ 89—189)։ Ծանոթագրությունները տրված են հունարեն թարգմանության տողատակում։ Այստեղ կանգ կառնենք Կացայիտեսի ճանապարհորդական նոթերի այն հատվածների վրա, որոնք հայագիտության համար հետաքրքրություն են ներկայացնում։

Կացայիտեսը վկայում է, որ քաղաքն ունի շատ ընդարձակ նավահանգիստ և Թուրքիայի ամենագլխավոր առևտրական կենտրոնն է, որտեղ բերվում են Ասիայի ամենաթանկագին ապրանքները։ Վենետիկի հյուպատոսարանի մոտ, — գրում է նա, — գտնվում է մաքսատան շենքը, որի մոտ է Հալազ խանը² (տունը)՝ (chan degl' Armeni, էջ 38 բնագրի և 112 թարգմանության)։ Ֆալբոսը ծանոթագրություններում ցույց է տալիս, որ «Հալազ խանը» ալվիի հին, գուցե XVII դ. շինություն պիտի լինի, որը «մինչև օրս հայտնի չէր»։ Այդ թխանի մասին մի այլ տեղում Կացայիտեսը ավելի մանրամասն է խոսում. «Հասարակական բոլոր շենքերը քարաշեն են, մեծ հողատարությամբ ու փառահեղությամբ կառուցված՝ ինչպես տաճարները։ Սրանք են Ջարշեն կամ Բեզեստենը՝ արճճե ծածկով, խաները, որոնցից ամենամեծն են Վեդիր խանը և Հալազ խանը, բոլորն էլ արճճով ծածկված» (էջ 74 բնագրի, էջ 170 թարգմանության)։ Կացայիտեսը գրում է, որ «նավահանգստի երկարությամբ գտնվում են քրիստոնյա հյուպատոսների տները, ինչպես և եվրոպացի առևտրականների մեծ մասի...։ Այն փողոցը, որի վրա են բնակվում քրիստոնյաները, կոչվում է Ֆրանկների փողոց...։ Հույներն ունեն իրենց մետրոպոլիտը, հայերը՝ մեկ եպիսկոպոս։ Մեծաթիվ են և հրեաները, որոնք շատ հարուստ են» (էջ 38 բնագրի, 112—113 թարգմ.)։

Իր առաջին ճանապարհորդության ժամանակ (1740 թ. գարուն-ամառ) Կացայիտեսը Զմյուռնիայում շատ քիչ մնաց, որովհետև քաղաքում մոլեբնում էր ժանտախտը, որի սարսափից ռազում հայեր և այլ վաճառականներ փախչում էին քաղաքից»։

Կացայիտեսը հայերի մասին ավելի մանրա-

¹ Φιλίππου Κ. Φάλλμπος, Μάρκου, 'Αντωνίου Κατσαίτη. Δύο ταξίδια στη Σμύρνη, 1740 και 1742. Εισαγωγή. Κείμενο. Μετάφραση-Σχόλια. Πίνακες. 'Αθήναι, 1972. «Մարկոս Անտոնիոս Կացայիտես։ Երկու ճանապարհորդություն դեպի Զմյուռնիա՝ 1740 և 1742 թթ.։ Ներածություն, բնագիր, թարգմանություն, ծանոթագրություններ, տախտակներ, Աթենք, 1972, 208 էջ։ Գրքի հեղինակն է զմյուռնիացի Յ. Ֆալբոսը։

² Բոլոր ընդգծումները մերն են—Հ. Բ.։

մասն է խոսում իր երկրորդ ճանապարհորդության նոթերում: Այս անգամ նա Զմյուռնիա հասավ 1742 թ. ապրիլի 13-ին: Մայիսի 23-ին, դրում է նա, «գնացի դրոսներու Բեզեստենում կամ Զարշըյում: Սա քարաշեն մի գեղեցիկ շենք է: Նրա երկու կողմում ամեն տեսակի ապրանքներով խանութներ, որտեղ առևտուր են անում հույները, հայերը և թուրքերը...: Այնտեղից գնացի Հայոց խանը, որը ևս քարաշեն է, արճճե ծածկով...» (էջ 62, նաև 67 բնագրի, 150, 158 թարգմ.): Կացալիտեսը շատ հաճախ էր այցելում Հայոց խանը: Նա այնտեղ եղել է նաև մայիսի 30-ին. «Գնացի Հայոց խանը,— գրում է նա,— գնելու մահճակալի երկու ծածկոցներ և այլ մանր մուրք բաներ նավապետ պարոն Սուդարիսիի և կապիտան Պետրովիչի համար» (էջ 64 բնագրի, 154 թարգմ.): Ժանապարհորդն այնուհետև խոսում է ոմն հայ Սարգսի մասին, որը վենետիկցիների թարգմանն էր և «Հայկական փողոցում» (strada degl' Armeni) ճոխ պարտեզով, աղբյուրներով ու ավազանով գեղեցիկ տուն ուներ: Զմյուռնիայից երկու մղոն հեռավորության վրա գտնվող Բուռնովա արվարձանի մասին խոսելիս նա գրում է, թե այնտեղ «բնակվում են թուրքեր, իսկ բազմաթիվ ֆրանկներ, հույներ և այլ քրիստոնյա վաճառականներ ունեն իրենց վիլլաները» (էջ 65 բնագրի, 156 թարգմ.): «Ծովով ողողվող բերդի մոտ,— գրում է նա,— գտնվում է մյուս մաքսատունը, առևտրական կոչվածը, որտեղ մաքսվում են Հոլլանդիայից, Ֆրանսիայից, Անգլիայից, Վենետիկից և քրիստոնյա այլ երկրներից բերվող ապրանքները, ինչպես նաև Պարսկաստանից հայերի կողմից բերվող և այնտեղից ֆրանկների միջոցով Նվրոպա տարվող մետաքսե կերպասներ, — բամբակե մանվածք, ուղտի բուրդ, կաշիներ, բրդյա մանվածք, և այլ ապրանքներ» (էջ 67 բնագրի, 160 թարգմ.): Կացալիտեսը ցույց է տալիս, որ հույները, հայերը և հրեաները շատ մեծ առևտուր են անում Զմյուռնիայում: Նրանք Պարսկաստանից և բովանդակ Փոքր Ասիայից բերում են ամենաթանկագին ապրանքները, ինչպես, օրինակ, մետաքսե կերպասներ, բամբակյա մանվածք, ուղտի բուրդ, կաշիներ, բրդեր, ռեանդ... և նման այլ ապրանքներ,

որոնք այնուհետև ֆրանկների կողմից փոխադրվում են Նվրոպա, նրանց փոխարեն ներմուծելով բրդյա կերպասներ, գուլնեզույն դիպակներ, մետաքսե գործվածքներ, շաքար և այլ ապրանքներ, որոնք հեշտությամբ վաճառում են թուրքերին» (էջ 73—74 բնագրի, 169 թարգմ.):

Սակայն այս անգամ էլ, մայիսի 31-ին քաղաքում դարձյալ ժանտախտ բռնկվեց, որը «տարածվեց Զմյուռնիայում, թուրքերի, հրեաների, հայերի մեջ, մոլեզվելով նաև ֆրանկների շրջանում» (էջ 69 բնագրի, 163 թարգմ.): Մարդիկ փախչում էին քաղաքից: Կացալիտեսի ծանոթներից ոմանք փախան վերոհիշյալ Բուռնովան երկնց կարանտինը մի ոմն հայի տանը անցկացնելու համար: Ինչպես երևում է ճանապարհորդի պատմածից, ժանտախտը Զմյուռնիայում սովորական երևույթ էր: Հաճախակի էին նաև երկրաշարժերն ու հրգեհները: Մի սարսափելի հրգեհ բռնկվեց 1742 թ. հուլիսի 8-ին, հրեական թաղում: Կացալիտեսը գրում է, թե բնակիչները ում էին մեղավոր համարում հրգեհի առաջացման մեջ: Ենթադրություններից մեկի համաձայն՝ հրգեհը թուրք մուլան էր կամ էլ զադին, որոնց դեմ «ոչ միայն հրեաները, այլև հույներն ու հայերը՝ յուրաքանչյուր ազգությունից շորսական հողի Պոլիս էին ուղարկվել... բողոք ներկայացնելու» (էջ 77 բնագրի, 175 թարգմ.): Հրգեհը սարսափելի չափեր ստացավ և մարդիկ փախչում էին իրենց փայտաշեն տներից, «եռաները, կարավանսարայները, բակերը և ճանապարհները լի էին թուրք, հրեա, հույն ու հայ ընտանիքներով»: Մարդիկ իրենց հույսը դրել էին «քարաշեն բերդի, բեզեստենի, վեզիր խանի և Հայոց խանի վրա» (էջ 78 բնագրի, 176 թարգմ.): Հրգեհը ավերակ դարձրեց քաղաքի 3/4-ը: Թուրքեր, հրեաներ և հայեր նավերն էին մտնում և գնում ապաստանելու Ռոդոստոյում և Կոստանդնուպոլսում (էջ 85 բնագրի, 186 թարգմ.):

Համառոտ գծերով այսպիսին են Կացալիտեսի տեղեկությունները Զմյուռնիայի հայերի մասին: Նա Զմյուռնիայից հեռացավ 1742 թ. հուլիսի 17-ին:

Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր